ԲՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մշակույթը համապարփակ և բարդ հասարակական երևույթ է։ Արտակենսաբանական և արտաբնական այդ երևույթը պետք է ուսումնասիրել միայն մարդկային գործունեության տեսանկյունից, որպես մարդկային գործունեության եղանակ[1]։ *Սակայն մշակույթի առաջացման ու զարգացման պրոբլեմն ուսումնասիրելիս ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ բոլորովին ոչ մի կապի մեջ չգտնվող էթնոսների*[2] *մշակույթների նմանության կամ հարևան ժողովուրդների մշակութային երևույթների յուրօրինակության առկայությունը հաճախ չի կարելի բացատրել միայն սոցիալական գործոնով։ Նման դեպքերում նկատվում է այն փաստը, որ նրանք ապրում են կամ նույնական, կամ, ընդհակառակը, ամենատարբեր բնական պայմաններում։ Հարց է առաջանում. ի՞նչ դեր կարող է խաղալ բնականը մարդկային մշակույթի, այդ թվում և հայ ժողովրդի մշակույթի զարգացման մեջ։*

Սոցիոլոգիական մտքի պատմության ընթացքում շատ մտածողներ փորձել են ցույց տալ բնական պայմանների ազդեցությունը հասարակական կյանքի վրա։ Այս միտքն իր որոշակի ձևակերպումը գտավ աշխարհագրական դետերմինիզմի ներկայացուցիչների մոտ (Շ. Մոնտեսքյո, Գ. Բոկլ, է. Ռեքլյու և ուրիշներ)։ Սակայն նրանք բնական պայմանների ազդեցությունը հասարակական կյանքի վրա դիտում էին ոչ թե արտադրողական ուժերով միջնորդավորված, այլ՝ անմիջականորեն։ Մետաֆիզիկական մոտեցման պատճառով նրանք չտեսան հասարակության հակազդեցությունը բնության վրա։

Քննադատելով նախորդների սահմանափակությունները, մարքսիզմի կլասիկները ելան մեթոդոլոգիական տեսակետից ճիշտ այն դրույթից, որ շրջապատող բնությունը հասարակության զարգացման գործում ոչ թե որոշիչ է, այլ միայն բնական նախադրյալ, պայման։ Ավելին, նրանք հաղթահարելով աշխարհագրական դետերմինիզմի ներկայացուցիչների միակողմանի մոտեցումը բնության ու մշակույթի փոխհարաբերության մեջ, կարողացան տեսնել այն կարևոր հանգամանքը, որ մշակույթն էլ իր հերթին հակազդում է բնության վրա։ Մեր օրերում ստեղծվող էկոլոգիական ճգնաժամի հնարավորություններն արդեն նկատել էր Կ. Մարքսը, որը Ֆ. Էնգելսին ուղղած մի նամակում գրում է. «Երբ կուլտուրան տարերայնորեն է առաջ ընթանում և գիտակցության տիրապետությանը չի ենթարկվում, իրենից հետո անապատ է թողնում»[3]։

---

[1] Э. С. Маркарян, О генезисе человеческой деятельности и культуры, Ереван, 1973.

[2] *Այս տերմինի տակ ի նկատի ունենք մարդկանց հանրության պատմական ձևերի ընդհանուր անվանումը* (տոհմ, ցեղ, ազգություն, ազգ): Ю. В. Бромлей, Этнос и этнография, М., 1973.

[3] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, Երևան, 1936, հ. 1. էջ 370։*

ժամանակակից հնագիտական, ազգագրական, մարդաբանական ու պատմական նյութը թույլ է տալիս բազմակողմանի և խորը ուսումնասիրել բնական գործոնի դերը մշակույթի զարգացման մեջ։ Այս նպատակով պարզենք «բնական գործոն» հասկացության բովանդակությունը, բաղադրամասերը։ Բնականը կարելի է դիտել որպես արտաքին-բնական և իմանենտ (ներունակ)-բնական գործոնների միասնություն։ Արտաքին բնական գործոն են աշխարհագրական միջավայրը, լանդշաֆտային ոլորտը և արտաերկրային բնությունը, որի հետ դարեր շարունակ մարդն էսթետիկական, տեսական-ճանաչողական և էմոցիոնալ հարաբերության մեջ է գտնվել։ Իմանենտ-բնականի տակ մենք ի նկատի ունենք մարդու անթրոպոլոգիական կառուցվածքը, ինչպես նաև մարդու կողմից կենդանական աշխարհի կենսաբանական ստրուկտուրաների և հատկությունների օգտագործումը, ընդօրինակումը (բիոնիկա)։

Մարդն իր նյութական-արտադրական գործունեության պրոցեսում աշխատանքի գործիքներ պատրաստելիս միշտ ընդօրինակել է իր, ինչպես նաև բիոսֆերայի այլ ներկայացուցիչների օրգանների կառուցվածքներն ու ֆունկցիաները[4]։ Վերջիններիս հաստատուն կամ համեմատաբար դանդաղ փոփոխվելու փաստը կարող է մշակույթին տալ համամարդկային գծեր, իսկ էթնիկական և ազգային՝ ոչ։

Աշխարհագրական միջավայրը, լանդշաֆտային ոլորտը, արտաերկրային բնությունը և բուսական ու կենդանական աշխարհն իրենց ստրուկտուրալ կողմերով ներկայացնում են այն բնական միջավայրը, որը մշակույթի զարգացման գործոն է հանդիսացել։ Գիտության պատմության ընթացքում «բնական միջավայր» և «աշխարհագրական միջավայր» հասկացությունները կիրառվել են որպես հոմանիշներ։ Մեր օրերում էլ ճշգրտված չեն այդ հասկացությունների ծավալն ու բովանդակությունը։ Հաճախ նույնացվում են բնության և բնական միջավայրի տերմինները, հաճախ էլ սրանք նույնացվում են աշխարհագրական միջավայր հասկացության հետ[5]։

Հազարամյակներ շարունակ երկրի ձգողական ուժերը, մթնոլորտը (որոնք չեն մտնում «աշխարհագրական միջավայր» և «լանդշաֆտային ոլորտ» հասկացությունների մեջ), արտաերկրային բնությունը ազդել են մարդկային ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արտադրության վրա։ Գիտության պահանջները ստիպում են կա՛մ արհեստականորեն ընդլայնել այդ հասկացությունների ծավալը, կա՛մ օգտագործել մեկ այլ տերմին, որը կընդգրկեր նաև բնության այն բոլոր օբյեկտները, որոնք չեն մտնում այդ հասկացությունների մեջ։ Այս իմաստով նպատակահարմար է օգտագործել բնական միջավայր տերմինը։ Վերջինիս տակ հասկանում ենք բնության այն մասը, որի հետ անմիջական կամ միջնորդավորված ձևով (նյութական արտադրության հիման վրա) շփվում է մարդը։ Բնությունն իր տարբեր ոլորտներով ազդում

---

4 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 190; С. С. Товмасян, Философские проблемы труда и техники, М., 1972; Ю. С. Мелешенко, Технический прогресс и его закономерности, Л., 1967.

5 М. М. Жирмунский, К вопросу о сферах взаимодействия природы и общества. соотношение в этом взаимодействии естественных и общественных элементов и географической среды («Природа и общество», М., 1968); С. Луцкий. По поводу статьи И. М. Забелина «Географическая среда. географические природные комплексы и система физико-географических наук» («Известия Всесоюзного географического общества», 1953, т 85, вып. 4).

Լ մարդկային մշակութային գործունեության վրա՝ հանդես գալով որպես վերջինիս զարգացման գործոն։

Այժմ տեսնենք, թե ինչ դեր է խաղացել բնական գործոնը հայ ժողովրդի մշակույթի զարգացման գործում։

Հայ մշակույթի մեջ բնական գործոնը խաղացել է երկակի դեր. մի կողմից այն պայմանավորել է նրա համամարդկային գծերի, իսկ մյուս կողմից՝ էթնիկականի՝ հայկականի, առանձնահատուկի գոյությունը։ Առանձնահատուկի վերաբերյալ մշակույթի մեջ գոյություն ունեն երկու մոտեցումներ։ Այսպես, Բ. Պորշնևը գտնում է, որ մշակույթների մեջ տարբերությունները վկայություն են նախնադարյան հարևան խմբերի ոչ բարյացակամ վերաբերմունքի, որով նրանցից յուրաքանչյուրը ձգտել է սահմանափակել մյուսի կողմից իրերի հափշտակումը[6]։ Ա. Պերշիցի և Գ. Խրուստովի կարծիքով, մշակույթների մեջ գոյություն ունեցող տարբերությունը արդյունք է նախնադարյան մարդկային խմբերի ցրվածության, երբ պատահականությունը ծնել է պատրաստման այս կամ այն ձևը, իսկ ավանդույթը հաստատել ու ամրապնդել է այն[7]։

Անշուշտ և՛ մեկը, և՛ մյուսը որոշ իմաստով իրավացի են, քանի որ ժողովուրդների մշակույթների առաջացման և հետագա զարգացման ընթացքում նշված երկու հանգամանքներն էլ նշանակություն են ունեցել։ Բայց պնդել, որ իրավացի է այդ բացատրություններից որևէ մեկը, ճիշտ չէ։ Ավելին, ժողովուրդների մշակույթների զարգացման պատմությունը տվել է բազմազան օրինակներ։ Մշակույթի յուրահատկությունը կարելի է բացատրել շրջապատող բնության յուրահատկությամբ, զարգացած ռեգիոններով շրջապատված լինելով, քաղաքական յուրահատուկ ճակատագրով և այլն։ Բայց միշտ այդ գործոնները միջնորդավորված են նյութական արտադրությամբ և նրանց վրա բարձրացող տնտեսական հարաբերությամբ։ Կարևոր է նշել, որ մշակութային յուրահատուկ գծերի առկայությունը բացատրելիս միշտ պետք է ելնել կոնկրետ սոցիալ-տնտեսական, քաղաքական և բնական պայմանների համախմբության գաղափարից։ Նրանց տարբեր կապակցությունները տալիս են տարբեր արդյունքներ։ Այսպես, օրինակ, բնական այնպիսի երևույթ, ինչպիսին կռունկների չուն է, շատ ժողովուրդների է հայտնի։ Բայց հայ ժողովրդի պատմական ճակատագիրն այն պրիզման է, որի միջոցով բեկվելով, այդ երևույթը ստեղծեց հոգևոր մշակույթի անկրկնելի նմուշներից մեկը՝ Կոմիտասյան «Կռունկը»։ Ի դեպ, ազգային երգերի մասին խոսելիս, Կոմիտասը նրանց նյութ համարում է. «Հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, հազար ու մեկ պատմական իրադարձություն և պատահար, ժողովրդի ներքին ու արտաքին կյանքը... մի խոսքով, այն բոլորն, ինչ ազդում է այդ ազգի մտքերի և զգացմունքների վրա»[8]։

Հայկական լեռնաշխարհի որոշ իմաստով բարենպաստ աշխարհագրական դիրքն այն կարևոր նախապայմանն է, որի շնորհիվ հայ ժողովրդի մշակույթը դասվում է աշխարհի հնագույն մշակույթների շարքը։ Հայաստանն

---

[6] Б. Ф. Поршнев, Проблема возникновения человеческого общества и человеческой культуры («Вестник истории мировой культуры», 1958, № 2, стр. 3).

[7] А. И. Першиц и Г. Хрустов. К проблеме возникновения общества и культуры («Вестник истории мировой культуры», 1959, № 5).

[8] «История эстетики», М., 1968, т. 4, ч. II, стр. 228.

ունենալով ուրույն բնակլիմայական պայմաններ և շրջապատված լինելով Միջերկրականի ավազանի, Փոքր Ասիայի ու Միջագետքի բարձր զարգացած մշակույթներով, չէր կարող զերծ մնալ ընդհանուր կուլտուրական զարգացման պրոցեսից։ Ինչպես վկայում են հնագիտական-ազգագրական նյութերը, նշված ռեգիոններում մ. թ. ա. VI—IV հազարամյակներում ձևավորված են եղել երկրագործական և անասնապահական ցեղեր[9]։

Հայկական լեռնաշխարհում բնակվող մեր նախնիների զբաղմունքը կախված է եղել տեղի պայմաններից։ Ենթադրենք, թե լեռնային վայրերում, որտեղ գոյություն ունեն հարուստ մարգագետիններ ու արոտավայրեր, զարգացած էր անասնապահությունը, իսկ հարթավայրերում՝ երկրագործությունը։ Հասկանալի է, որ բնական պայմաններով թելադրված զբաղմունքը իր հերթին ստիպում է ստեղծել համապատասխան գործիքներ, որոնց պատրաստման համար օգտագործվել են շրջապատող բնության մեջ առատ նյութերը (քար, մետաղ, կավ և այլն)։

Հայաստանի տարածքում գտնված բաղմաքանակ նյութերը վկայում են, որ նեոլիթի և էնեոլիթի շրջանում հողագործության հիմնական գործիքը եղել է բրիչը՝ քարե ծայրակալով, ավելի ուշ, մետաղի գյուտից հետո՝ մետաղե ծայրակալով։ Այնուհետև հողագործության մեջ օգտագործվել են արորն ու գութանը, որոնք գոյություն ունեին մինչև մեր օրերը։ Քարքարոտ, լեռնային շրջաններում արորը գործում էր մինչև 1960-ական թվականները[10]։

Հայկական լեռնաշխարհում քարատեսակների առատությունն իր կնիքն է դրել աշխատանքի գործիքների պատրաստման վրա։ Գործիքներ էին պատրաստվում օբսիդիանից, տուֆից, բազալտից, կայծքարից և այլն։ Քարը, մասնավորապես տուֆը, այն հիմնական շինանյութն է, որը սկսած անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերն օգտագործվում է։ Ընդհակառակը, անտառների համեմատաբար աղքատության պատճառով փայտն ավելի քիչ է օգտագործվել։ Մեզ հասել են տվյալներ, որոնց համաձայն արդեն մ. թ. ա. X—VII դդ. Շիրակում զարգացած է եղել փայտի մշակման արհեստը[11]։ Այնուամենայնիվ, այն համեմատաբար ավելի ցածր մակարդակի վրա է գտնվել, քան քարի մշակման արհեստը։ Ս. Լիսիցյանը գրում է. «Հայ արհեստավորներն ինչքան հմուտ քարտաշներ են եղել, նույնքան էլ նրանք անհաջող են եղել փայտի մշակման մեջ»[12]։

Հայ ժողովրդի մշակույթի զարգացման գործում մեծ դեր է խաղացել մետաղը, որով հարուստ է մեր լեռնաշխարհը։ Հայաստանը համարվում է մետալուրգիայի հնագույն օջախներից մեկը[13]։ Մետաղի առկայությունը Հայկական լեռնաշխարհում այն բնական նախապայմանն էր, որի շնորհիվ զարգացավ երկրագործությունը։ Վերջինս էլ իր հերթին նպաստեց հարթավայրերի յուրացմանը, ինչպես նաև արհեստների զարգացմանը։

Կլիմայական պայմանները ստիպեցին, որ մեր նախնիները երկրագոր-

---

9 Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956.

10 Վ. Հ. Բդոյան, Հայ ազգագրություն, Երևան, 1973, էջ 38։

11 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, стр. 263.

12 С. Д. Лисицян, Очерки этнографии дореволюционной Армении («Кавказский этнографический сборник», вып. 1, М., 1955, стр. 185).

13 Т. С. Хачатрян, նշվ. աշխ.; Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, М., 1975.

ծական աշխատանքների մեջ կիրառեին արհեստական ոռոգման սիստեմը։ Ն. Հարությունյանը նշում է, որ «հողագործական և այգեգործական-խաղողագործական կենտրոնները աստիճանաբար հանդես եկան այն տարածքներում, որոնք օժտված էին ջրի հարուստ ռեսուրսներով, կամ գտնվելիս են եղել ջրային ճանապարհներից ոչ հեռու»[14]։

Հիմնականում համաձայնվելով Ն. Հարությունյանի հետ, պետք է նշել, որ այգեգործությունը Հայաստանում զարգացել է նաև ջրազուրկ, բայց այլ բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող վայրերում։ Ոռոգման համար կառուցվել են ջրանցքներ և այլ արհեստական սիստեմներ, որոնք հանդես են եկել դեռ ուրարտական ժամանակաշրջանից։ Նման սիստեմի լայն ցանց ստեղծելու շնորհիվ վերջին շրջանում հնարավոր եղավ այգեգործական նպատակներով յուրացնել Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան շրջանի հողերը։

Ինչպես լեռնային այլ ժողովուրդներ, հայերն էլ վաղուց սկսել են օգտագործել ընկնող ջրի ուժը։ Խոր ձորերով հոսող ջուրը թելադրեց նաև ջրաղացների կառուցումը[15]։ Անկախ այն հանգամանքից, թե ջրաղացները սկզբից հանդես են եկել հայերի մոտ կամ փոխ ենք առել այլ ժողովուրդներից (այս հարցը դեռ ճշգրտման կարիք ունի), այնուամենայնիվ, երկու դեպքում էլ առկա է բնական գործոնը, քանի որ մշակութային որևէ երևույթ փոխ առնելու համար անհրաժեշտ է բնական բաղա։ Այսպես, օրինակ, Եվրոպայում ամենուր տարածված հարթավայրային հողմաղացները չեն եղել Հայկական լեռնաշխարհում՝ վերջիններիս խիստ կտրտված լեռնային ռելիեֆի պատճառով։

Աշխարհագրական միջավայրը ոչ պակաս դեր է խաղացել նաև հաղորդակցության և փոխադրության միջոցների ստեղծման գործում։ Վերջիններիս դերը մեծ է և առանձին ժողովուրդների մշակույթի զարգացման ու հարևան էթնոսների մշակույթների փոխազդեցության և փոխհարստացման մեջ։

Բնությունը մի կողմից արգելել է մարդկանց շփումը, իսկ մյուս կողմից՝ կարծես «ստիպել է» ելք գտնել այդ վիճակից։ Գետերի ափերին ապրող մարդիկ հանգեցին կամուրջների, իսկ մեծ ջրային տարածություններ հաղթահարելու համար՝ լաստերի, նավակների և նավերի անհրաժեշտությանը։ Այդ նպատակով Հայկական լեռնաշխարհում օգտագործվել են լաստը, մակույկը և նավակը, իսկ ցամաքային պայմաններում՝ անանիվ քարշակները (քարաքաշան, սահնակ), անիվավոր փոխադրամիջոցները։ Խիստ կտրտված լեռնային վայրերում օգտագործել են երկանիվ սայլը, քարաքաշանները, ձըմռանը՝ սահնակները[16]։ Այս փոխադրամիջոցները մինչև այսօր գործում են լեռնային վայրերում։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ նրանք դարեր շարունակ բավարարել են աշխարհագրական միջավայրի տեղական պայմաններին։

Շրջապատող բնության առանձնահատկություններն արտացոլվել են նաև բնակավայրերի ու բնակարանների կառուցման և կենցաղային առարկաների պատրաստման մեջ։ Պաշտպանական նպատակներով հայկական բնակավայ-

---

[14] Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван. 1964, стр. 205.

[15] С. Д. Лисицян, *նշվ. աշխ., էջ 188։*

[16] Л. Н. Петросян, Армянские народные сухопутные средства передвижения («Кавказский этнографический сборник», М., 1972).

ները հաճախ կառուցվում էին բնականից ամրացված բլուրների և սարալանջերի վրա։ Բնակավայրերի այսպիսի դասավորությունը հատուկ է քուռ-արաքսյան մշակույթը[17] ներկայացնող ժողովուրդներին[18]։ Այդ ժողովուրդները, նրանց թվում նաև հայերը խիստ լեռնային վայրերում բնակավայրերը կառուցում էին այնպես, որ մեկ տան կտուրը հաջորդի համար բակ էր ծառայում և այդպես շարունակ։ Այստեղ ակնհայտ է այն փաստը, որ բնական պայմանները տարբեր ժողովուրդների մշակույթների մեջ ընդհանուր գծեր պայմանավորող գործոն են։ Իհարկե, արտադրողական ուժերի զարգացումը հանգեցնում է բնակավայրերի, բնակարանների և, ընդհանրապես, հասարակական կյանքում բնական պայմանների դերի հարաբերական նվազման։ Բացարձակ իմաստով, ընդհակառակը, բնության դերը կաճի, քանի որ մարդն իր մշակութային գործունեության մեջ է ընդգրկում նորանոր բնական օբյեկտներ, նրանց հատկությունները։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով Կ. Մարքսը գրում է, որ ինչպես նախնադարյան մարդն իր կյանքը պահպանելու և վերարտադրելու համար պարտավոր էր պայքարելու բնության դեմ, «այնպես էլ պետք է պայքարի և քաղաքակրթված մարդը, պետք է բոլոր հասարակական ձևերում և արտադրության բոլոր հնարավոր եղանակների դեպքում»[19]։

Բնական միջավայրի և, մասնավորապես, աշխարհագրական միջավայրի ազդեցությունը մշակույթի զարգացման վրա ըստ հետևանքի կարելի է դիտել երկու ասպեկտով։ Առաջին դեպքում շրջապատի երևույթների, առարկաների առանձնահատկությունները արտացոլվելով մշակույթի մեջ, պայմանավորում են պարզապես նրա յուրահատկությունը։ Օրինակ, որևէ շինանյութի առատությունը, բնական տվյալ օբյեկտի պաշտամունքը կամ կենցաղային առարկաների վրա տվյալ էթնոսի ուշադրությունն հատուկ կենդանիների պատկերումը պայմանավորում են այս կամ այն մշակույթի յուրօրինակությունը։ Այս ասպեկտը, ըստ իր խաղացած դերի, գնահատման չի կարելի ենթարկել (դրական կամ բացասական)։

Երկրորդ դեպքում աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունները սոցիալական գործոնի հետ պայմանավորում են ինչպես էթնոգենեզի, այնպես էլ էթնիկական տվյալ ամբողջության գոյատևման պրոցեսը։ Հենց այս իմաստով Հայկական լեռնաշխարհի դիրքը մի կողմից կարծես նախադրյալ է եղել բազմաթիվ ռազմական արշավանքների համար, մյուս կողմից՝ մեծ պաշտպանական ֆունկցիա է կատարել, որի շնորհիվ մեր ժողովուրդը կարողացել է պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը։ Ըստ երևույթին ելնելով այս՝ էթնիկական պրոցեսի տեսակետից, լանդշաֆտային յուրահատկության և աշխարհագրական միջավայրի դերը կարելի է գնահատման ենթարկել։ Ի դեպ, խոսելով էթնիկական պրոցեսի մասին, Լ. Գումիլյովն այն բաժանում է չորս ժամանակաշրջանի. էթնոսի պատմական լինելիության, պատմական գոյության սկզբնական փուլի, պատմական գոյության վերջնական փուլի և անկման[20]։ Տարածական ասպեկտով էթնոգենեզի հարցը քննե-

---

17 Քուռ-արաքսյան մշակույթն առաջին անգամ առանձնացվել է Բ. Կուֆտինի կողմից, Б. А. Куфтин, Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-аракский энеолит («Вестник Государственного музея Грузии», XIII—В, Тбилиси, 1944).

18 Р. М. Мунчаев, նշվ. աշխ., էջ 154։

19 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, գիրք 3, Երևան, 1949, էջ 360։

20 Л. Н. Гумилев, Этногенез и этносфера («Природа», 1970, № 1,2).

լիս նա դալիս է այն եզրակացության, որ էթնոսները հիմնականում առաջացել են ոչ թե միասեռ, այլ բազմազան լանդշաֆտի պայմաններում։ Իրականում այդ պրոցեսը տեղի է ունեցել և մեկ, և մյուս պայմաններում[21]։ Որոշ չափով չափազանցություն կլինի պնդել, թե քանի որ Մերձավոր Արևելքը ծովերի, լեռների, տափաստանների, լեռնային անտառների, անապատների և գետային հովիտների զուգակցում է, ապա «Այնտեղ նոր էթնիկական համակցություններ հաճախ են ծագել, բացառությամբ Անդրկովկասի, որտեղ բնական պայմաններն ավելի շատ հարմար են իզոլյատների առաջացման համար»[22]։ Այսինքն՝ միասեռ լանդշաֆտը կայունացնում է էթնոսին, իսկ բազմազանը՝ տարալուծում։ Հայ ժողովրդի մշակույթն ունենալով իր ուրույն գիծը, բնավ էլ մեկուսացած չի եղել, այն այլ ժողովուրդների մշակույթների հետ ունի բազմաթիվ ընդհանուր գծեր։

Մեծ է բնական գործոնի դերը նաև հայ ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման մեջ։ Ուրույն լանդշաֆտային կառուցվածքը կապի ու փոխադրամիջոցների պարզունակ եղանակի պայմաններում արգելք է հանդիսացել Հայաստանի տարբեր շրջանների շփմանը։ Այս հանգամանքը կնիք է դրել տարազների, ծեսերի, սովորույթների և բարբառների բազմազանության առաջացման վրա։ Հայերենը բարբառներով հարուստ լեզու է, քանի որ բնական արգելքներով իրարից բաժանված բնակավայրերի միջև դարերի ընթացքում բացակայել է ինտենսիվ կապը։

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ տարածական տեսակետից հավասար, բայց լանդշաֆտային տեսակետից տարբեր ռեգիոնների «բարբառների խտությունը» համեմատելիս կպարզվի, որ լեռնային պայմաններում այդ խտությունն ավելի մեծ է։ Այս հարցում մեծ նշանակություն ունի նաև սոցիալական գործոնը (տվյալ ռեգիոնի բնակիչներն ինչպիսի հարևաններով են շրջապատված, ինչ հարաբերության մեջ են գտնվում նրանց հետ և այլն)։ Օրինակ, արևելահայերի և արևմտահայերի բարբառները, խոսելաձևը և հընչյունների արտասանությունը տարբերվում են։

Բարբառների առաջացման հարցում չի կարելի համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք անտեսում են աշխարհագրական միջավայրի դերը։ Այսպես, Լ. Լավրովը Դաղստանում գոյություն ունեցող բազմալեզվությունը բացատրում է որպես ներամուսնության (էնդոգամիայի) արդյունք[23]։ Իսկ Բ. Պորշնևը, ելնելով այն դրույթից, որ միջտոհմային հարաբերությունները կարող են լինել դրական և բացասական (վերջիններն էլ համարելով գերակշռելի) եզրակացնում է, որ լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունը «չէր կարող լինել բնական պատճառների պտուղ։ Այն միշտ արհեստական միջոց է ծառայել յուրայիններին ուրիշներից առանձնացնելու և տարբերելու համար»[24]։ Նրա կարծիքով, «մենք»-ի և «նրանք»-ի միջև գոյություն ունեցող բացասական հարաբերության (թշնամանք, ատելություն, միմյանցից երես դարձնել և այլն) հետևանքով էթնիկական ամբողջության խոսքի տեմպը և

---

21 Ю. В. Бромлей, К характеристике понятия «этнос» («Расы и народы», I, М., 1973, стр. 21).

22 Л. Н. Гумилев, *նշվ. աշխ., էջ 52։*

23 Л. И. Лавров, О причинах многоязычия в Дагестане («Советская этнография», 1951, № 2)

24 Б. Ф. Поршнев, Социальная психология и история, М., 1966, стр. 94.

հնչյունների արտասանության ձևը տարբերվում են միմյանցից։ Բայց և նրա ընդունած այն փաստը, որ «մենք» և «ներանք» սահմանազատվում են բնական արգելքներով (գետ, սար և այլն), արդեն նահանջ է սեփական դիրքերից և վերջին հաշվով այդ հարցում աշխարհագրական միջավայրի գերի ընդունում։

Բնական միջավայրը հետք է թողել նաև հայ ժողովրդի աշխարհընկալման, էսթետիկական և կրոնական պատկերացումների վրա։ Ազգագրական, պատմական հարուստ նյութը վկայում է այն մասին, որ հայերի մոտ պաշտամունքի առարկա են եղել հողը որպես ծնող ուժ, քարը՝ կրակի աղբյուր, երկրագործության մեջ որոշիչ նշանակություն ունեցող և կենսունակության ու բերրիության աղբյուր հանդիսացող՝ ջուրը։

Նյութական արտադրության պրոցեսում առաջացած դժվարությունները հաճախ ստանալով գերբնական տեսք, իրենց արտահայտությունն են գտել նյութական առարկաների ձևով։ Այսպես, դեռ 1907 թ. ռուս հնագետ Ց. Ի. Սմիռնովը Գեղամա լեռներում գտավ քարակոթողներ, որոնց ժողովուրդն անվանում է «վիշապ»։ Հետագայում դրանցից գտնվեցին Արագածի լանջերին և այլուր։ Դրանց ծագման բացատրություններ տվել են Ն. Մառը, Ց. Սմիռնովը, Բ. Պիոտրովսկին[25], Մ. Աբեղյանը։ Նրանք հիմնականում ճիշտ են նկատել, որ այդ քարակոթողները տեղադրված լինելով աղբյուրների, լճերի և արհեստական ջրամբարների մոտ, ծագումով կապված են ջրի, պտղաբերության հետ։ Գր. Ղափանցյանը մերժելով Մ. Աբեղյանի տեսակետը, որի համաձայն այդ ձկնանման կոթողները Աստղիկ աստվածուհուն են ներկայացնում, գրում է, որ նրանք սիմվոլացնում են բնության կանաչապատումը, պտղատվությունը, հողագործությունը և ջրի առատությունը[26]։ Վերջինիս կարիքը Հայաստանի չոր կլիմայական պայմաններում երկրագործության մեջ շատ խիստ էր զգացվում։

Դեռ անիմիզմի և տոտեմիզմի շրջանից պաշտամունքի առարկա են հանդիսացել մի շարք կենդանիներ, որոնցով հարուստ է եղել Հայկական լեռնաշխարհը և որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվել են նյութական արտադրության պրոցեսի հետ։ Սիմվոլացնելով հողագործությունը և բերրիությունը, ցուլը եղել է պաշտամունքի առարկա։ Մասնավորապես այն պատկերված է վերոհիշյալ քարակոթողների վրա։ Օձը համարվել է պտղաբերության հովանավոր։ Իսկ թռչունների պաշտամունքն իր արտահայտությունն է գտել ժողովրդական բանահյուսության և ժողովրդական երգերի մեջ[27]։

Մարդկության զարգացման ընթացքում մշակույթի վրա (հատկապես հոգևոր) ազդել է ոչ միայն երկրային, այլև՝ արտաերկրային բնությունը։ Վերջինիս ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը ժողովուրդների մշակույթների վրա իրագործվել է գիտակցական և բիոլոգիական ուղիներով։ Այս կամ այն ժողովրդի աշխարհընկալման, մտքերի և պատկերացումների ձևավորման վրա մեծ ազդեցություն են գործել հորիզոնը, արևը, այլ լուսատուներ և ամբողջ երկինքը։ Տիեզերքն իր անհասանելիությամբ ու խորհրդավորությամբ մարդու մոտ հետաքրքրություն է առաջացրել՝ խթանելով գիտական, էսթետիկական, կրոնական պատկերացումների ձևավորումը և զարգացումը, իսկ

[25] Б. Б. Пиотровский, Вишапы—каменные статуи в горах Армении. Л., 1939.
[26] Г. А. Капанцян, О каменных стелах на горах Армении, Ереван, 1952, стр. 11.
[27] Վ. Հ. Բդոյան, նշվ. աշխ., 209—211։

վերջին հաշվով՝ նյութական նոր օբյեկտների ստեղծումը։ Բնության յուրահատկությունները հաճախ պայմանավորում են յուրահատուկը, ազգայինը արվեստի, գիտական գաղափարների կամ որևէ այլ նյութական մշակույթի մեջ։

Հայ ժողովրդին դարեր շարունակ հետաքրքրել է տիեզերքն իր բազմազանություններով։ Երկնային լուսատուներն արտացոլվել են պոեզիայի և կերպարվեստի մեջ։ Նրանց օգնությամբ մեր ժողովուրդը կարողացել է որոշել դաշտային աշխատանքների ժամկետները, ձեռք բերել տոմարագիտական գիտելիքներ, տարբերակել ցերեկվա ու գիշերվա պահերը, ստեղծել արևի ժամացույց և այլն։ Արևը, լուսինը և այլ լուսատուներ ազդելով մեր ժողովրդի կրոնական պատկերացումների վրա, աստվածացվել են և եղել պաշտամունքի առարկա։ Հեթանոսության շրջանում պաշտամունքի օբյեկտ էր արևը, որը պայմանավորում է կյանքի գոյությունը։ Հետագայում արևի պաշտամունքն իր արտահայտությունն է գտել բույսերի անունների, երդումների և այլոց մեջ։ Ենթադրվել է, որ աստղերն ունեն բարի ու չար հատկություններ, կարող են մարգկանց քաշել պատերազմների մեջ, լինել հիվանդությունների պատճառ։

Արտաերկրային բնությունն ազդել է բոլոր ժողովուրդների մշակույթների վրա, բայց կախված այս կամ այն ժողովրդի զարգացման մակարդակից, սոցիալ-քաղաքական վիճակից, աշխարհըմբռնողության յուրահատկությունից, այդ ազդեցությունը դրսևորվել է ուրույն, յուրահատուկ ձևով՝ հաճախ պայմանավորելով ազգայինը։ Մեր օրերում մարդու տիեզերք դուրս գալու, արտաերկրային բնության հետ անմիջականորեն շփվելու շնորհիվ մարդկային մշակույթի զարգացումը նոր թափ է ստանում, լայն հնարավորություններ են բացվում մշակույթի մեջ համամարդկային նոր գծերի առաջացման համար։

Այսպիսով, արտաքին-բնականը և ներունակ-բնականը միշտ այս կամ այն կերպ ազդել են հայ ժողովրդի մշակույթի զարգացման վրա՝ հանդես գալով որպես բնական գործոն։

РОЛЬ ПРИРОДНОГО ФАКТОРА В РАЗВИТИИ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ

С. О. ОГАНЕСЯН

Резюме

Человеческая культура — чрезвычайно сложный общественный феномен. Будучи внебиологическим, надприродным явлением, она должна рассматриваться только применительно к сфере человеческой деятельности. Вместе с тем наличие сходных культурных черт у различных народов, не находящихся в контакте, а также тех или иных ярко самобытных явлений в культурах соседних этносов зачастую невозможно объяснить только социальным фактором. Природный фактор в сочетании с основным — социальным (материальное производство, социально-политические условия и т. д.) обусловливает как общечеловеческие, так и национальные черты в культуре армянского народа.